ՎԵՐՋՈՅԹԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԽՕՍՔՈՒՄ

Անդրանիկ Կարապետեան

Պատկերաւորութիւնը, արտայայտչականութիւնը եւ յուզականութիւնը գեղարուեստական խօսքում ապահովւում են լեզուական որոշակի միջոցների ու հնարանքների, լեզուայօրինուածքային տարբեր ձեւերի գործադրումով, որոնց շարքում խիստ կարեւորւում է կրկնութիւնն իր տարաբնոյթ դրսեւորումներով: Կրկնութիւնը լեզուի արտայայտչական չհնացող միջոց է, որը գեղարուեստական խօսքում, մանաւանդ չափածոյում, հսկայական դեր է կատարում՝ ապահովելով պատումի ցանկալի ներգործութիւնը: Կրկնուող լեզուամիաւորը, որպէս կանոն, դառնում է ասոյթի իմաստի եւ յուզարտայայտչական լարուածութեան կրողը, նպաստում է խօսքի հնչիւնական ներդաշնակութեանը, կշռոյթի ու չափի ուժեղացմանը, յաճախ էլ խօսքի մէջ ներմուծում է երաժշտութեան տարրեր: Կրկնաբերական տարածուած արտայայտչամիջոցներից մէկը վերջոյթն է:

Վերջոյթը յարակրկնութեան հակառակ բանաձարժումն է, որը դրսեւորւում է բանաստեղծութեան կից տողերի վերջում նոյն բառի կամ բառակապակցութեան, երբեմն էլ նախադասութեան կրկնութեամբ: Դասական ճարտասանութեան մէջ այս արտայայտչամիջոցը կրել է վերադարձում, դարձում *անուանումները: Յարակրկնութեան դրսեւորման ծաւալն ու հնարաւորութիւնները չունենալով հանդերձ՝ վերջոյթն էլ նպաստում է չափածոյ խօսքի կշռոյթի եւ արտայայտչականութեան ապահովմանը, յուզական ներգործութեան ուժեղացմանը:*

Խիստ բնորոշ լինելով չափածոյին՝ վերջոյթը սակաւադէպ արտայայտւում է նաեւ արձակ խօսքում, երբ վերջինս դրսեւորում է կշռոյթաւոր ու չափական երեւալու միտում, իսկ նմանատիպ խօսքի կառուցումը գրողից պահանջում է մի առանձին վարպետութիւն: Արձակ խօսքում վերջոյթը հանդէս է գալիս մասնաւորապէս հետեւեալ դէպքերում.

ա) երբ բարդ նախադասութեան բաղադրիչները վերջանում են նոյն բառով կամ բառակապակցութեամբ. ինչպէս՝

«*Երթամ* ոոլիկս, *աշխարքի հետ չեմ փոխի* ոոլիկս. *ամէնից մեծ թագաւորութիւնն է* ոոլիկս» *(ԱԻ, 4, 482):*

բ) երբ կրկնւում են խօսք կազմող ինքնուրոյն նախադասութիւնների վերջին բառերը. ինչպէս՝

«*Արշակը իր խոր աչքերը դարձրեց Գարեգինին եւ աղաչական* նայեց նրան: *Գարեգինը եւս* նայեց նրան: *Այլեւս* անհնար էր նայել» *(ԴԴՎ, 618):*

Այս ամէնով հանդերձ՝ վերջոյթը մնում է որպէս չափածոյի յատկանիշ ու առանձնայատկութիւն եւ այստեղ երեւան է հանում դրսեւորման տարբեր իւրայատկութիւններ՝ միշտ ծառայելով խօսքի գեղագիտական պահանջներին:

Մենք վերջոյթի արտայայտութեան ձեւերը տարբերակում ենք կրկնութեան շարքի անդամների շարահիւսական գործառոյթի հիմքով՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ այս կրկնութեան շատ իւրայատկութիւններ պայմանաւորուած են լինում հէնց կրկնուող լեզուամիաւորների շարահիւսական կիրառութիւններով: Ըստ շարահիւսական գործառոյթի տարբերակւում են վերջոյթի հետեւեալ տեսակները՝ ենթակայ վերջոյթ, ստորոգեալ վերջոյթ, գոյականական անդամի լրացում *(որոշիչ,*

յատկացուցիչ) վերջոյթ, բայական անդամի լրացում *(խնդիր, պարագայ)* վերջոյթ, նախադասութեան յարակից միաւոր վերջոյթ, նախադասութիւն վերջոյթ *եւ այլն: Սրանց տարբերակուած քննութիւնն անհրաժեշտ է՝ հարցն իր համակարգային ամբողջականութեան մէջ ներկայացնելու համար:*

ա. ԵՆԹԱԿԱՅ ՎԵՐՋՈՅԹ

Ենթակայ վերջոյթը, որը ստորոգեալ վերջոյթի համեմատութեամբ աւելի սակաւ է հանդիպում, երեւան է գալիս այն ժամանակ, երբ չափածոյ խօսքը շրջուն շարադասութեամբ բարդ նախադասութիւն է, եւ տրամաբանական շեշտի պահանջով ենթական հեռացած է տողավերջ ու միւս տողերի նոյն դիրքում կրկնւում է, իսկ ստորոգեալները միւս անդամներով փոխադրուած են բանատողերի առաջին մասը: Հարեւան տողերի վերջում ենթակայի համաչափ կրկնութիւնն ապահովում է բանաստեղծութեան չափն ու կշռոյթային ներդաշնակութիւնը: Այսպէս՝

«Մի՛ տրտնջայ ցաւիդ համար - սիրոյ առատ աղբիւր է *նա,*

Մի՛ ափսոսայ մեղքիդ համար - սիրտը մաքրող սուրբ հուր է *նա.*

Թէ սէրն անցնի՝ մի մորմոքայ - կը մնայ յուշ՝ մաքուր է *նա,*

Սիրտդ թող միշտ խնդայ կամ լայ - մահ է մթին, երբ լուռ է *նա»* (ՎՏԲ, 401):

Քառատող տան մէջ դերանուն ենթական կազմում է նաեւ միջարկուած վերջոյթ, երբ խօսքը բաղադրուած է երկու բարդ ստորադասական նախադասութիւններից, որոնց ստորադաս բաղադրիչները գրաւում են 1-ին եւ 3-րդ տողերը, իսկ յետադաս գլխաւորները՝ 2-րդ եւ 4-րդ տողերը, որոնց վերջում էլ ընդհանուր ենթական կրկնւում է՝ շեշտելով գործողի դէմքը. ինչպէս՝

«Թէ որ մի տեղ եմ գնում,

Մտքով գալիս ես *դու,*

Հոգուս թէ ամպ է իջնում,

Թաքուն լալիս ես *դու»* (ԳՍԲՊ, 30):

Ութտողանի բանաստեղծական տան մէջ դերանուն ենթական կրկնւում է համաչափ ընդհատումներով՝ 2-րդ, 4-րդ եւ 8-րդ տողերի վերջում՝ ապահովելով կշռոյթային ներդաշնակութիւնը ամբողջ խօսքի շղթայում. ինչպէս՝

«Սեւանի կապոյտ ջրեր,

Նոր կեանքի ալիքն եք *դուք,*

Դարձել էք արտ, այգիներ,

Բերքառատ բարիքն էք *դուք.*

Որքան էլ գաք ու գընանք՝

Մեր սրտում յար լիքն էք *դուք,*

Մեր երկրի լուսավարար

Ծողշողուն գալիքն էք *դուք»* (ԳՍԲՊ, 151):

Ոչ տնային կառուցուածք ունեցող ընդարձակ բանաստեղծութեան մէջ գոյական ենթական դրսեւորում է վերջոյթային կրկնութեան շարքը ձգելու միտում: Այս դէպքում ենթակայի տողավերջեայ կրկնութեան նպատակը թեմայի ընդլայնումն է գործող առարկայի մասին նորանոր մանրամասներ, նրա նորանոր յատկանիշներ ի յայտ բերելու ճանապարհով, որպիսի պայմաններում ենթակայի կրկնութիւնը դառնում է նաեւ իրավիճակային գործածութիւն: Բացի այդ, խօսքի ընդհատումը կանխելու եւ նրան նոր լիցք հաղորդելու համար յաճախ բանաստեղծութեան միջնամասում կրկնւում է առաջին բանատողը՝ դառնալով յենարան խօսքի շղթան շարունակելու համար: Այսպէս՝

Ի՞նչ է ուզում ինձնից

Այս կատաղած *քամին,*

Այս ծաղրածու *քամին,*

Լարախաղաց *քամին,*

Մի մեծ, մի լաւ աշուն

© National Library of Armenia

Տարած-թաղած *քամին*:

Թող գայ, այգուս խշշուն

Խաշամն առնի գնայ,

Փոչակալած, փոչոտ,

Փշաքաղուած *քամին*:

Ի՞նչ է ուզում ինձնից

Թոկից փախած *քամին*,

Հազար անտառ, հազար

Ջոր յաճախած *քամին*,

Մի եղեամոտ աշուն

Պոչից կախած *քամին*:

Իմ տան քիւի վրայ

Թողած-փախած հաւքի

Մի փետուր է մնում,

Թող գայ առնի գնայ,

Ախ, այս նախանձ *քամին*,

Խիղճը ծախած *քամին* (ՀՍՍԲ, 133):

Երբեմն էլ ենթական վերջոյթ է կազմում իր նախադաս յատկացուցչի կամ որոշչի հետ, միայն թէ յատկացուցչի հետ բազմանդամ շարք կազմելու միտում քիչ է դրսեւորում. ինչպէս՝

Ի՞նչ Մարիամ էր քո ծնողը, սրբի մայր էր *քո ծնողը*,

Սրտիս գարնան հեւք բերեց նա, լոյս կամար էր *քո ծնողը* (ԳԱԾ):

Մինչդեռ որոշիչ+ենթակայ *կապակցութիւնը հակուած է կազմելու վերջոյթային կրկնութեան աւելի բազմանդամ շարք: Ծաւալուն բանաստեղծական տան մէջ նման վերջոյթը սովորաբար երեւան է գալիս հաւասար կամ անհաւասար տողերի միջարկումով՝ ապահովելով իր ազդեցութեան համաչափ տարածումը խօսքի շղթայում. օրինակ՝*

Ի՞նչ է ասում ճամփորդներին

Հալուած-մաշուած *այս կածանը*,

Ժամանակին հազար ու մի

Քայլեր հաշուած *այս կածանը*,

Անցող-դարձող քարաւանի

Ծանր ու դանդաղ ոտքերի տակ

Մէջքը կոտրած, կուրծքը պատռած,

Ցոգնած, տանջուած *այս կածանը*,

Մեծ աշխարհի մեծաժխոր

Ճանապարհից հեռու քաշուած,

Ցիսուսի պէս ապառաժի

Կողին խաչուած *այս կածանը* (ՀՍ, 2, 105):

Բ. ՍՏՈՐՈԳԵԱԼ ՎԵՐՋՈՅԹ

Ստորոգեալ վերջոյթն աւելի յաճախադէպ է եւ բնորոշ է հիմնականում չափածոյ բարդ համադասական նախադասութեանը, որտեղ այն հանդէս է գալիս տարաբնոյթ դրսեւորումներով՝ պայմանաւորուած համադասական կապակցութեան բաղադրիչ նախադասութիւնների ենթականների ընդհանուր կամ տարբեր լինելով եւ կառուցուածքային այլեւայլ առանձնայատկութիւններով: Ընդհանուր եւ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասութիւնների մէջ ստորոգեալի վերջոյթային կրկնութիւնն ունի տարբեր իրացումներ:

Նախ՝ ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասութեան մէջ ստորոգեալ վերջոյթի դրսեւորումների մասին: Այստեղ աւելի յաճախ բայ-ստորոգեալը կրկնւում է կից բանատողերի վերջում՝ նախադաս համասեռ խնդիրները կամ պարագաներն ընդգծելու նպատակով. ինչպէս՝

Արեւին նայող աչքերն համբուրիր,

Սարերին փարուած ամպերն համբուրիր,

Քարերին ծաղկած մամուռն համբուրիր,

Մեծ ելումուտի այս դուռն համբուրիր (ՀՍՍԲ, 33):

Երբեմն էլ քառատողի վերջում հանդէս է գալիս միայն թուարկուող վերջին ուղիղ խնդիրը, իսկ սրա լրացեալ կրկնորդ ստորոգեալը զեղչւում է՝ կիսատ թողնելով բանաստեղծական տողը, բայց շարունակում է մտովի ուղեկցել իր խնդրին. ինչպէս՝

Մանուկ էին պահում

Եւ տուն էին պահում,

Աշխարհ էին պահում

Ու ժողովուրդ... (ՀՍՍԲ, 215):

Ուղիղ խնդիրների վկայակոչմանը նպատակաուղղուած վերջոյթ ստորոգեալները յաճախ բանաստեղծական տան առաջին երեք տողերում արտայայտւում են զուգադրական բայի առաջին բաղադրիչով, իսկ այս բայի երկրորդ բաղադրիչը հանդէս է գալիս միայն չորրորդ տողում՝ փակելով թուարկման շարքը եւ ամփոփելով բանաստեղծական տունը. ինչպէս՝

Հառաչանքներս *առնում*,

Այս ծանր բեռս *առնում*,

Բոլոր հոգսերն *առնում*

Տանում է հետը (ՀՍՔԵ,57):

Այստեղ առկայ է առնում տանում *է զուգադրական պարզ ստորոգեալի մասնակի վերջոյթային կրկնութիւն: Ստորոգեալ վերջոյթը նախադաս ուղիղ խնդիրների հետ հանդէս է գալիս նաեւ բանաստեղծական այլ տողի կամ տողերի միջարկումով. ինչպէս՝*

Երազիս մէջ լիճը *տեսայ* '

Ոսկի ալիք ցոլալիս.

Մի տղի հետ յարիս *տեսայ*՝

Ոսկի նաւով մաս գալիս (ԱԻ, 2, 49):

Կրող խնդիրներն ընդգծելու համար ստորոգեալ վերջոյթի անդամները կարող են արտայայտուել միեւնոյն բայի հաստատական ու ժխտական ձեւերով. օրինակ՝

Գլխիդ վրայ տէր *չունէիր*,

Մէջքիդ վրայ բեռ *չունէիր*,

Սիրտ սպանող սէր *չունէիր*...

Զգիտէիր մինչեւ անգամ,

Որ մի օր էլ վերջ *ունէիր* (ՀՍՔԵ, 113):

Կրող խնդիրների ընդգծմանը ծառայող բայական ստորոգեալի վերջոյթային կրկնութեան դէպքում ընդհանուր ենթական հանդէս է գալիս նաեւ յետադաս շարադասութեամբ՝ իր լրացման հետ սահմանափակելով ստորոգեալի կրկնութեան թուարկման շարքը. ինչպէս՝

Հետը արեւ *է բերում*,

Կանաչ սարեր *է բերում*,

Կանաչ դարեր *է բերում*

Զորզորա *գետը* (ՀՍՔԵ, 57):

Ընդհանուր ենթական շարադասւում է նաեւ նախավերջին տողում՝ դառնալով կապող օղակ բանաստեղծական տան վերջին եւ նախավերջին տողերի միջեւ. ինչպէս՝

Դեռ արցունքներ *ունի*,

Դեռ արցունքներ *ունի*

Ծիծաղի մէջ պահած,

Հողը ամէն հողում

Տարագիրներ *ունի* (ՀՍ, 2, 69):

Քանի որ թուարկուող կրող խնդիրներն ընդգծող ստորոգեալ վերջոյթն ուժեղացնում է խօսքի յուզականութիւնն ու մեղեդայնութիւնը, այդ պատճառով էլ այն յաճախ է հանդիպում գուսանական պոէզիայում: Այստեղ ստորոգեալ վերջոյթին յաջորդող տողով կատարւում է ընդհանրացում. ինչպէս՝

Ցոյս տալով, մօտ չի գալով կենդանութիւնս *մաշեցիր*,

Ծատախօս բլբուլ արիր, հանդարտ անունս *մաշեցիր*,

Անիրա՛ւ, մինչ սիրովդ սիրտ ու արիւնս *մաշեցիր*,

© National Library of Armenia

Ուրեմն անհանգչելի, անգութ կրակ ես ինձ համար (ՇՏ,28):

Ստորոգեալ վերջոյթը հանդէս է գալիս նաեւ համասեռ պարագայ լրացումները, մանաւանդ ձեւի պարագաները թուարկելու, դրանց բառական նշանակութիւնը կարեւորելու նպատակով. օրինակ՝

Մայրամուտ, Մասեաց գագաթին

Խարոյկդ վառած *մեռնէի*,

Արեւից, հողից, հողմերից

Կարօտս առած *մեռնէի*,

Իմ վերջին հառաչքի միջից

Գոհութեան ճիչը բողբոջէր,

Արտերս, արտերս վարած,

Պարտքերս մարած *մեռնէի* (ՀՍՍԲ, 121):

Այստեղ մարդկային յոյզերի ու ապրումների խտացումը պայմանաւորուած է ըղձական եղանակի բայ-ստորոգեալի միջարկուած վերջոյթային կրկնութեան եւ սրան նախորդող բառերի յարանուն ական շարքի (վառած-առած-վարած-մարած) *հմուտ զուգորդմամբ:*

Չափածոյ ընդհանուր ենթակայով բարդ համադասական կապակցութեան մէջ ստորոգեալ վերջոյթին երբեմն նախորդում են այլ ստորոգեալներ՝ շարահիւսական տուեալ կառոյցը դարձնելով աւելի բազմաբարդ եւ հաղորդումը հարստացնելով իմաստային այլ տարրերով, բայց այս դէպքում էլ բովանդակութեան պլանում իմաստային շեշտադրումը մնում է ստորոգեալ վերջոյթի վրայ. ինչպէս՝

Աշխարհիս մէջ ես էլ մէ օր կանցնեմ անդարձ ու *կ'երթամ*,

Ետ չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ - ու *կ'երթամ* (ԵՁ, 1, 244):

Քառեակի ժանրում ստորոգեալ վերջոյթը հանդէս է բերում մէկ այլ իւրայատկութիւն. կրկնեալ ստորոգեալը միայնակ զբաղեցնում է առաջին տողը՝ կազմելով կիսատող, ապա իբրեւ թեմայի կրող յաջորդ տողավերջերում հանդէս են գալիս կրկնորդ ստորոգեալները. օրինակ՝

Ա՛նց կացա՛ն....

Օրերս թրոռան, ա՛նց կացա՛ն.

Ախ ու վախով, դարդերով

Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն (ՅԹԸԵ, 63):

Վերջապէս, թէեւ ոչ պարզ ստորոգեալի յաճախականութեամբ, վերջոյթ են կազմում ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասութեան նաեւ անուանական ստորոգեալները: Ընդ որում՝ այս դէպքում էլ անուանական ստորոգեալ վերջոյթին կարող են նախադասուել այլ ստորոգեալներ. ինչպէս՝

«Մոլորուել եմ, ճամփաներին *ծանօթ չեմ*,

Բիւր լճերին, գետ ու քարին *ծանօթ չեմ*,

Ես պանդուխտ եմ, էս տեղերին *ծանօթ չեմ*... (ԱԻ, 1, 356):

Երբեմն էլ վերջոյթ են կազմում անուանական ստորոգեալների հանգոյցները՝ զուգորդուելով ստորոգելիների յանգաւորմանը. ինչպէս՝

Փրփրած գետ*ակ էիր*

Ճահիճների կողքին,

Խոր ծովերի կողքին

Մի պարզ լճ*ակ էիր* (ՀՍՍԲ, 243):

Այժմ չափածոյ տարբեր ենթականերով բարդ համադասական կապակցութեան մէջ ստորոգեալ վերջոյթի դրսեւորման մասին: Այստեղ ստորոգեալ վերջոյթը հանդէս է բերում այլ իւրայատկութիւններ՝ պայմանաւորուած բաղադրիչ նախադասութիւնների կառուցուածքով, ենթակաների ու ստորոգեալ վերջոյթի անդամների յարաբերութեամբ, ստորոգեալների արտայայտութեամբ, բայական լրացումների շարադասութեամբ եւ այլ հանգամանքներով:

Ակնյայտ է, որ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասութեան մէջ եւս վերջոյթ է կազմում հիմնականում պարզ ստորոգեալը: Աւելի յաճախ բանաստեղծական տան իւրաքանչիւր տող մէկ բաղադրիչ նախադասութիւն է, եւ վերջոյթ ստորոգեալներին նախորդում են ենթականերն իրենց նախադաս լրացումներով: Այս դէպքում, անշուշտ, ընդգծւում է վերջոյթի անդամների բառական նշանակութիւնը, բայց կարեւորւում են նաեւ թուարկուող ենթականերն իրենց բնութագրական լրացումներով. օրինակ՝

Ի՛մ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ *չկայ*.

Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ *չկայ*.

Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ *չկայ*.

Ինչպէս անհաս փառքի ճամփայ՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում (ԵՁՊԲ, 289):

Տարբեր ենթականերն աւելի են ընդգծւում, երբ վերլուծական ժամանակներով արտայայտուած վերջոյթ ստորոգեալները հանդէս են գալիս իրենց բաղադրիչների շրջուն շարադասութեամբ. օրինակ՝

Ամէն մի վազի նախշուն ողկոյզին մատներն *են կպել*,

Ծիւ-շիւ ճիւղերին, կանաչ տերեւին վարսերն *են կպել*,

Իմ այգում թուփ-թուփ, իր ծաղկայ ծուփ-ծուփ շորերն *են կպել*... (ԳԱԾ, 169):

Նման կառուցուածքում պարզ ստորոգեալը կազմում է նաեւ միջարկուող վերջոյթ, երբ կրկնութեան շարքը ընդհատւում է մէկ այլ տողով. ինչպէս՝

Եւ հիմա ո՞ւր եմ եւ ի՞նչ...

Ինձ յիշող ու լացող *չկայ*,

Իմ առաջ էլ դուռ չի բացւում,

Եւ դուռս էլ բացող *չկայ* (ՀՍՍԲ, 233):

Շատ յաճախ միջարկուող վերջոյթին նախադասւում են յարանուն բառեր, որոնք ստեղծում են իւրատիպ բառախաղ եւ նաեւ իրենց ներքին յանգաւորմամբ նպաստում են բանաստեղծական չափի ու կշռոյթի ներդաշնակութեան ապահովմանը: Այսպէս՝

Գարուն էր... սիրտս գնաց,

Բարձունքից-բարձրունք ընկաւ,

Ոտքիս տակ, ամէն քայլիս,

Մանկութեան մասունք ընկաւ...

Վեր թռայ ինչ-որ կանչից,

Տառապած բարձիս վրայ

Աչքիցըս իրեն-իրեն

Մի կաթիլ *արցունք ընկաւ* (ՀՍՍԲ, 101):

Բառախաղը երբեմն էլ ապահովւում է երկու տարբեր համահունչ վերջոյթների համադրումով, եւ այս դէպքում էական դեր է խաղում նաեւ բանաստեղծութեան ներքին յանգաւորումը. ինչպէս՝

Երկինքը մօտ է գալիս,

Ոտքը շաղոտ է գալիս,

Քարափների քիւերից

Քարայծի հոտ է գալիս,

Սուրբ հացի *հոտ է գալիս*,

Երդիկներից հորահոտ...

Բացուէ՛ք, աչքեր, մի տեսէք՝

Ի՜նչ առաւօտ *է գալիս* (ՀՍԴԾ, 113):

Այստեղ առկայ է մէկ լիակատար վերջոյթային զոյգ (հօտ է գալիս - հոտ է գալիս) *եւ մէկ մասնակի վերջոյթային զոյգ (մօտ է գալիս - (շա)*ղոտ է գալիս - *(առա)*ւօտ է գալիս*): Աւելացնենք, որ մօտ, շաղոտ, հօտ, հոտ եւ առաւօտ բառերի օտ հնչիւնակապակցութեամբ ներքին յանգաւորումը ստորոգեալների վերջոյթային կրկնութիւնը որոշ չափով դարձնում է լիակատար:*

Երբ վերջոյթ ստորոգեալներն ունենում են համասեռ լրացումներ, դրանք

© National Library of Armenia

անմիջապէս նախորդում են իրենց լրացեալներին, իսկ ենթականերն իրենց լրացումներով շարակարգւում են նախորդ բանատողերում: Արդիւնքում՝ ստանում ենք միջարկուած ստորոգեալ վերջոյթ՝ համասեռ խնդիր լրացումների ընդգծումով. ինչպէս՝

Քո լալազար, ծիծղուն ծաղկունք

Իմ վարդ-սէրէն բոյր *կ'առնին.*

Զառ Մանթաշի թեւ ու թռչունք

Իմ բլբուլէն ձեն *կ'առնին,*

Հեղ ջա՛ն, հա ջա՛ն, ցողն ու ակունք

Սրտիս խորքէն ծին *կ'առնին* (ԱԻ, 2, 20):

Ստորոգեալ վերջոյթը երեւան է գալիս նաեւ բայական անդամի անհամասեռ պարագայ (տեղի ու ձեւի եւ այլն) լրացումներն ընդգծելու նպատակով. ինչպէս՝

Իմ սիրածը ինձ թողեց *ո՞ւր գնաց,*

Անխօս, անժպիտ գնաց, *լո՛ռ գնաց,*

Կարծում էի, թէ գարնան հետ կը գայ,

Գարունն իմ սիրոյ, ափսոս, *զուր գնաց* (ԳՍԲՊ, 85):

Պարզ ստորոգեալի միջարկուած վերջոյթն արտայայտւում է նաեւ չափածոյ բազմաբարդ համադասական կապակցութեան մէջ՝ բաղադրուած տարբեր կառուցուածքի (համադասական, ստորադասական) նախադասութիւններից: Վերջոյթի անդամ ստորոգեալներին նախադասւում են համասեռ պարագաներ, եւ ամբողջ բանաստեղծութիւնը ենթարկւում է ներքին հատոյթաւորման. ինչպէս՝

Վերջապէս մի օր տեսայ,

Երգերիս մէջ էի լալիս,

Կարծես թէ էլ տեղ չկար,

Ջեռքերիս մէջ էի լալիս.

Որպէսզի ուրախ անցնեն,

Արցունքս չտեսնեն մարդիկ,

Սրտիս մէջ, ցաւերիս մէջ,

Վէրքերիս մէջ էի լալիս (ՀՍՍԲ, 233):

Ջափածոյ բազմաբարդ համադասական կապակցութեան մէջ երբեմն էլ առաջին երեք տողերում շարակարգւում են տարբեր ենթականեր՝ միեւնոյն ստորոգեալ վերջոյթի հետ, ապա յաջորդաբար, առանձին բանատողերով կրկնւում են նոյն ենթակաները, եւ թուարկման շարքը փակւում է ստորոգեալ վերջոյթի վերջին անդամի երեւան գալով. ինչպէս՝

Հայ վշտի մասին *քարերը կ'ասեն,*

Թէ քարը չասի՝ *սարերը կ'ասեն,*

Թէ սարը չասի՝ *դարերը կ'ասեն,*

Քարերը,

Սարերը,

Դարերը կ'ասեն,

Մեր մագաղաթեայ լարերը *կ'ասեն* (ՑԾ, 3, 165):

Ընդհանրապէս, վերջոյթային կրկնութեան բազմանդամ շարքը չի խրախուսւում. այն որոշ չափով խօսքը դարձնում է ճապաղ, միապաղաղ եւ անյոյզ: Բայց ոճական այս հնարանքի վարպետօրէն կիրառումը յաճախ ոչ միայն չի ունենում նշուած անցանկալի հետեւանքները, այլեւ խօսքը դարձնում է արուեստաւոր եւ յուզական: Կրկին դիմենք Հ. Սահեանին, որը այնքան յաճախ է կիրառում ստորոգեալի բազմանդամ վերջոյթային կրկնութիւնը.

Քնածին ո՞ւր *ես ասում,*

Մի արթունի *ասա...*

Սահեանն է այս հողի տակ,

Վնաս չունի, *ասա:*

Եկել ես, անց ես կենում

Գերեզմանի մօտով,

Մի հայրէն *ասա՝ լսի,*

Մի անտունի *ասա:*

Որքան էլ սիրտը այրել

Ու խորովել, *ասա,*

Իր բախտից ոչ մի անգամ

Չի խոովել, *ասա:*

Անցնելիս ոտքդ կախիր,

Ուրիշ կտակ չունէր,

Մի «Կոունկ» *ասա՝ լսի*

Մի հորովել *ասա* (ՀՍՍԲ, 107):

Ջափածոյ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասութեան մէջ վերջոյթ է կազմում նաեւ անուանական ստորոգեալը, երբ հեղինակը մի կողմից՝ լեզուառճական նկատառումով որոշակի պարբերականութեամբ կրկնում է միեւնոյն ստորոգային յատկանիշը, միւս կողմից՝ դրան հակադրում կամ համադրում է մէկ այլ ենթակայի ու վերջինիս ստորոգային յատկանիշի եզրը. օրինակ՝

-Սիրելի՛ս, *մի հատիկս ես,*

Աշխարքի *մէջ մի հատիկ ես,*

Ես մեռնիմ - քեզի մատաղ,

Դուն ծաղկի՛ր- *մի հատիկ ես* (ԱԻ, 2, 37):

Երբեմն էլ բարդ համադասական կապակցութեան իւրաքանչիւր բաղադրիչ նախադասութիւն ունենում է իր առանձին ենթական, եւ ստորոգեալ վերջոյթի ամէն մի անդամ յարաբերւում է այդ ենթականերից մէկին: Այսինքն՝ թուարկուող տարբեր ենթականերին վերագրւում է նոյն յատկանիշը: Գործող առարկաները շեշտելու համար ստորոգեալ վերջոյթի հանգոյցը հանդէս է գալիս նախադաս շարադասութեամբ: Այսպէս՝

Միայն չարն *է ուրիշ,*

Քաղքենին *է ուրիշ,*

Աչքածակն *է ուրիշ:*

Պորտաբոյծը, յոռին,

Անառակն *է ուրիշ,*

Ինքն իրենից փախած

Խեղկատակն *է ուրիշ* (ՀՍՍԲ, 242):

Անուանական ստորոգեալի մասնակի վերջոյթ կարելի է դիտել ձեւական դիմաւոր անուանական միակազմ նախադասութիւններից բաղադրուած համադասական կապակցութեան մէջ անուանական ստորոգեալների հանգոյցի տողավերջեայ կրկնութիւնը. ինչպէս՝

Ամառ է,

Արտ է,

Ու լուսաբաց է... (ՎԴԱՄ, 136):

Ինչ վերաբերում է չափածոյ բարդ ստորադասական կապակցութեան մէջ ստորոգեալ վերջոյթի դրսեւորմանը, ապա պէտք է նշել, որ այստեղ այն անհամեմատ քիչ է հանդիպում: Ընդհանրապէս կապակցութեան ստորադասական ձեւը համադասականի համեմատութեամբ պակաս կշռոյթաւոր է: Հիմնականում սրանով է բացատրւում չափածոյ բարդ ստորադասական նախադասութեան մէջ վերջոյթի, այդ թւում եւ ստորոգեալ վերջոյթի, սակաւադէպ հանդէս գալը: Երբեմն ստորադասական նախադասութիւնը բաղադրւում է չափածոյ անհամաչափ տողերով, եւ գլխաւոր նախադասութիւնն ունենում է առաջադաս պայմանի պարագայ երկրորդական նախադասութիւն ու յետադաս համաստորադաս նպատակի պարագայ երկրորդական նախադասութիւններ՝ ստորոգեալ վերջոյթով: Այս վերջոյթի անդամներն իրարից հեռացած են միջարկուող տողերով, եւ նրանց ցրուածութիւնը յաղթահարելու ու կապն ապահովելու նպատակով կրկնուող ստորոգեալը հանդէս է գալիս նաեւ վերջոյթը միջարկող տողամիջում՝ դառնալով յենարան խօսքի ծաւալումը շարունակելու եւ նաեւ վերջոյթի ծայրանդամները միմեանց կապելու համար. ինչպէս՝

Թէ խելքս գլխիս լինէր էն գլխից,

Ողորմած Աստուա՛ծ, դեռ մօրս գրկից

Քեզ կ'աղօթէի,

© National Library of Armenia

Որ դու այս մի բուռ շնորհքի տեղակ

Ինձ մի քանի բեռ բթութիւն *տայիր*,

Որ ձեռեր *տայիր* դու խորքի տեղակ

Եւ լոյսի տեղակ

Հոգուս մի մամոռտ մթութիւն *տայիր* (ՀՍԳԲ, 149):

Յաճախ միեւնոյն բանաստեղծական խօսքում ներդաշնակւում են բայական ու անուանական ստորոգեալ վերջոյթները եւ տարաբնոյթ ներքին յանգաւորումները՝ ստեղծելով նրբահիւս ու նպատակադիր խօսք: Այսպէս՝ դիտարկենք գուսան Աշոտի հետեւեալ ստեղծագործութիւնը.

Ո՛վ ժողովո՛ւրդ, իմ *ծնողը դո՛ւ ես, դո՛ւ*

Ինձ կեանք տուող, *ինձ սնողը դ՛ու ես, դո՛ւ:*

Քո շէն այգում ես մի տերեւ՝ անցողիկ,

Ինձ փայփայող, ինձ պահ*ողը դո՛ւ ես, դո՛ւ:*

Ինչ ինձ տուիր, հազար էդքան թէ քեզ տամ,

Քիչ է դարձեալ, իմ սուրբ մայրը *դո՛ւ ես, դո՛ւ:*

Ես առանց քեզ ուրախութիւն, *սէր չունեմ,*

Քեզնից բացի ուրիշ հալալ *տէր չունեմ,*

Աշխարհ գիտի, որ ես *հէր* ու *մէր չունեմ,*

Իմ հէրն ու մէր, իմ *ծնողը դո՛ւ ես, դո՛ւ:*

Ինչ ինձ տուիր, հազար էդքան թէ տամ քեզ,

Քիչ է դարձեալ, իմ սուրբ մայրը *դո՛ւ ես, դո՛ւ*... (ԳԱԳՍ, 106):

Այստեղ ամէնից առաջ աչքի է զարնւում 1-ին բանատան անուանական ստորոգեալ երկշարք վերջոյթը՝ դու ստորոգելիի տողավերջեայ կրկնութեամբ ձեւաւորուած. կրկնեալ ստորոգեալն արտայայտուել է ամբողջովին, իսկ կրկնորդը՝ հանդոյցի զեղչումով: Գուսանը ստեղծել է բազմաշարք թէ՛ հակակրկնական եւ թէ՛ վերջոյթային շարքեր: Նման շարքերով չափածոյ խօսք կառուցելը նրա լեզուաոճական իւրայատկութիւններից մեկն է: Երկշարք վերջոյթին զուգորդուել են երկու տիպի ներքին յանգաւորումները՝ կիցտողեայ կամ ուղղահայեաց երկշարք (տուող-փայփայող, ծնողը-սնողը-պահողը) *եւ մէկտողեայ կամ հորիզոնական* (տուող-սնողը, փայփայողն-պահողը) *յանգերը:*

Երկրորդ բանատանն էլ բայական պարզ ստորոգեալ վերջոյթին (չունեմ-չունեմ-չունեմ) *ներդաշնակւում է սէր, տէր, հէր, մէր յարանուն բառերի կազմած կիցտողեայ ներքին յանգաւորումը (այս բառերը կազմում են մէկ ոչ ճշգրիտ յանգ, իսկ նրանց մէջ* եր-*ի կրկնութիւնը՝ մէկ ճշգրիտ յանգ): Աւելացնենք, որ առաջին բանատան մէջ շեշտւում է կրկնուող ստորոգելին՝ 2-րդ դէմքը ընդգծելու նպատակով, իսկ 2-րդ բանատան մէջ՝ կրկնուող ստորոգեալի կրող խնդիր լրացումները:*

Կրկնութեան արտայայտած յուզարտայայտչականութիւնը, ժողովուրդ-ստեղծագործող անհատ օրգանական կապն աւելի է խորացնում երկտողեայ կրկներգը, որի 2-րդ տողավերջում կրկնուող անուանական ստորոգեալը 1-ին բանատան նոյն միաւորի հետ կազմում է մէկ վերջոյթ՝ ապահովելով ողջ խօսքաշղթայում 2-րդ դէմքի ընդգծումը՝ մայր ժողովրդի դերի կարեւորումը:

Վերջապէս, եթէ վերջոյթներն էլ դիտում ենք որպէս կրկնաբերական յանգեր, ստացւում է, որ ամբողջ բանաստեղծութիւն-երգը կառուցուած է արտաքին կրկնաբերական յանգեր-վերջոյթների ու ներքին յանգերի եւ կրկներգի նուրբ ու ներդաշնակ զուգորդումների վրայ: Եւ այդ ստեղծագործութիւնը բարձրարժէք բանաստեղծութիւն է եւ նոյնքան բարձրարժէք երգ հէնց շնորհիւ կրկնաբերութեան յիշեալ ձեւերի արուեստաւոր զուգորդումների, որոնք ծառայում են խօսքի հնչիւնական հարստութեան ու կշռութային ներդաշնակութեան եւ նրա չափաբերական ընթացքի ապահովմանը:

գ. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ ՎԵՐՋՈՅԹ

Վերջոյթի մէկ այլ տեսակ է տողավերջերում ենթակայի ու ստորոգեալի միաժամանակեայ կրկնութիւնը: Այս դէպքում վերջոյթ է կազմում ենթակայ+ստորոգեալ *կապակցութիւնը: Նման վերջոյթը դրսեւորում է այլ իւրայատկութիւններ՝ պայմանաւորուած ենթակայի ու ստորոգեալի շարադասութեամբ, բանաստեղծական տողերի ներքին համահնչիւնութեամբ եւ այլ հանգամանքներով:*

Աւելի յաճախ ենթակայ+ստորոգեալ *վերջոյթն արտայայտւում է գլխաւոր անդամների սովորական շարադասութեամբ: Վերջոյթին նախադասւում են ուղիղ խնդիրները, որոնք իրենց համահնչուն վերջաւորութեամբ ներքին յանգ են կազմում՝ աւելի ներդաշնակ դարձնելով կշռոյթը: Տրամաբանական շեշտը ընկնում է թուարկուող ուղիղ խնդիրների վրայ. ինչպէս՝*

Սէրս լացող աստղի *քոյրը ես կ՚ուզեմ,*

Սիրուց էլ վեր անշեջ *հուրը ես կ՚ուզեմ,*

Անմահական այս աղբիւ*րը ես կ՚ուզեմ,*

Որ համբոյրից չմոխրանամ անընկեր (ՑԾ, 3, 80):

Այստեղ բայական անդամի շեշտուող համասեռ լրացումներն արտայայտւում են նաեւ տարբեր բառերով՝ իրենց յանգաւորմամբ ձուլուելով ստորոգեալ+ենթակայ *վերջոյթին: Այսպէս՝ հետեւեալ օրինակում վերջոյթը երեւան է գալիս պատճառի պարագաների ընդգծման նպատակով.*

Առատ, անյայտ՝ Աստծու ընման՝ միշտ *տեղալուց յոգնել եմ ես.*

Հոգիս ծարաւ՝ սրրան-ընրան մընտիկ *տալուց յոգնել եմ ես.*

Մինը պիտի գար իմ դէմը՝ ճոխ ու շքոայլ անհաշիւ,

Ամէն ճամփում *ըսպասելուց ու փընտրելուց յոգնել եմ ես* (ՑԹՐԵ, 73):

Նման կառուցուածքը յաճախ յատկորոշւում է երկու զուգորդուող վերջոյթների իմաստային հակադրութեամբ. ստորոգեալ+ենթակայ *վերջոյթի անդամ տողերը միջարկւում են մէկ այլ ստորոգեալ վերջոյթ կազմող տողերով, երբ այս վերջին ստորոգեալն իր լրացումներով բառային կամ խօսքային հականշութիւն է կազմում հիմնական վերջոյթ ստորոգեալների ու սրանց լրացումների հետ: Այսպէս՝*

Տաղով եկաւ,

Ախով գնաց *Սայաթ-Նովան.*

Երգով եկաւ,

Վէրքով *գնաց Սայաթ-Նովան.*

Սիրով եկաւ,

Սրով *գնաց Սայաթ-Նովան.*

Սիրով մնաց *Սայաթ-Նովան* (ՑԹՐԵ, 47):

Այստեղ ստորոգեալ+ենթակայ (գնաց Սայաթ-Նովան) *հիմնական վերջոյթից բացի, առկայ է երկրորդ վերջոյթը՝ յանձին* եկաւ *ստորոգեալի տողավերջի միջարկուած կրկնութեան, եւ այս վերջոյթին էլ նախորդում է յանգը (տաղով - երգով): Բերուած հատուածում առկայ են երկու տարբեր հակադրութիւններ. հակադրութիւն են կազմում մի կողմից՝ կրկնուող ստորոգեալները* (եկաւ-գնաց), *միւս կողմից՝ ձեւի պարագաները* (տաղով-ախով, երգով-վէրքով, սրով-սիրով)*: Ենթական, որպէս ընդհանուր անդամ, դուրս է հակադրութեան ծիրից:*

Յաճախ ծաւալուն բանաստեղծութիւնն ամբողջովին կառուցւում է ստորոգեալ+ենթակայ *կապակցութեան վերջոյթային կրկնութեան սկզբունքով: Վ. Տէրեանի՝ երկտողեայ եօթ տներից կազմուած «Հրաժեշտի գազելը» ոճական այս արտայայտչամիջոցի դրսեւորման փայլուն օրինակ է, միայն այն իւրայատկութեամբ, որ այստեղ* ստորոգեալ+ենթակայ *վերջոյթը* (ասում եմ

© National Library of Armenia

ես) *հեղինակի խօսքն է, որին յաջորդում է մէկ այլ վերջոյթ կազմող ուղղակի խօսքը* (մնաս բարով), *չնայած հեղինակն այս տարբերակումը կէտադրութեամբ չի արտայայտել: Այսպէս՝*

Ամէն վայրկեան սիրով տրտում *ասում եմ ես* մնաս բարով.

Բորբ արեւին իմ բոց սրտում *ասում եմ ես* մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց չար ու բարի,

Տանջուող ու որբ Ադամորդուն *ասում եմ ես* մնաս բարով... (ՎՏԲ, 241):

Երբեմն էլ նման վերջոյթի անդամ ստորոգեալներն ունենում են մասնակի համընկնում. դրանք արտայայտւում են այնպիսի յարադիր բայերով, որոնց յարադիրները տարբեր բառեր են (մեծ մասամբ յարանուններ), իսկ յարադրեալը նոյն բառն է: Բառախաղ ստեղծող ստորոգեալների տողավերջեայ նման փոխյաջորդումը կարելի է դիտել որպէս մասնակի վերջոյթ. օրինակ՝

Ամպի լեռներ է *փուլ տուել քամին*,

Ծիածաններ է *կուլ տուել քամին*:

Քամին մի ամբողջ աշուն է տարել,

Ամբողջ աշխարհ է *շուռ տուել քամին*:

Տարել է, տարել. էլ ո՞ւր էք ասում.

Սխալմունքներ է *թոյլ տուել քամին* (ՀՍՍԲ, 132):

դ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄ ՎԵՐՋՈՅԹ

Տարբեր յաճախականութեամբ վերջոյթ են կազմում նաեւ երկրորդական անդամները, որոնց բնորոշ է ենթակայ, ու մանաւանդ, ստորոգեալ վերջոյթների համեմատութեամբ աւելի սակաւադէպ հանդէս գալը: Երկրորդական անդամ կամ լրացում վերջոյթներն էլ միատարր չեն եւ ունեն իրենց դրսեւորումները:

1. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՎԵՐՋՈՅԹՆԵՐ

Գոյականական անդամի լրացումներից բացայայտիչը, որպէս կանոն, վերջոյթ չի կազմում՝ իր լրացական բնոյթով պայմանաւորուած. բացայայտչի մեկնական իմաստը չի կարող չափական խօսքում պարբերական կրկնութեամբ հանդէս գալ: Վերջոյթ կազմելու միտում համեմատաբար շատ է դրսեւորում յատկացուցիչը եւ այն էլ հիմնականում չափածոյ բարդ համադասական կապակցութեան մէջ, երբ նոյն յատկացուցիչ լրացում են ունենում համասեռ տարբեր գոյականական անդամներ, եւ հաղորդման նպատակներից մէկը կրկնուած յատկացուցիչները կշռոյթով ու հնչերանգային բազմերանգութեամբ ընդգծելն է, մանաւանդ երբ դրանց նախադասւում են յարանուն յատկացեալներն՝ իրենց յանգաւորմամբ. ինչպէս՝

Միտքն է հիմա *սէրն աշխարհի*,

Աշխարհակալ *տէրն աշխարհի*,

Բեռնակիրն ու *բեռն աշխարհի*

Եւ *աշխարհի* ճանապարհը (ՀՍՍԲ, 116):

Այստեղ աշխարհի *կրկնորդ յատկացուցիչը, վերջին անդամ տողամէջ փոխադրուելով, փակել է վերջոյթի շարքը: Երբեմն էլ յատկացուցիչ վերջոյթի միջադաս կրկնորդն է արտայայտւում տողամիջում՝ կապելով կրկնութեան շարքի նախադաս ու վերջադաս անդամներն իրար. ինչպէս՝*

Գնում էիր, գնո՛ւմ, գնո՛ւմ,

Չէիր տեսնում ոտքերիդ տակ

Խարակներն ու խութը *աշխարհի*,

Դեռ չէր բախուել քո բախտի հետ

Այս *աշխարհի* արատը մեծ,

Սուտն *աշխարհի* (ՀՍՔԵ, 114):

Աւելի սակաւադէպ վերջոյթ է կազմում որոշիչը՝ միայնակ կամ իր լրացեալի՝

յատկացուցիչ լրացման հետ, երբ որպէս տարբեր համասեռ գոյականական անդամների լրացում հանդէս է գալիս տողավերջեայ ներդաշնակ կրկնութեամբ. ինչպէս՝

Ես չը գտայ ոչ մէկին

Երազներից *իմ շընքեղ*,

Եւ ոչ մի մարդ, ոչ մի կին՝

Հերոսներից *իմ շընքեղ* (ՅԹՐԵ, 56):

Այստեղ, քանի որ շընքեղ *որոշչի հետ կրկնուել է նաեւ* իմ *յատկացուցիչը, վերջոյթ են կազմում յատկացուցիչը եւ որոշիչը միաժամանակ:*

2. ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՎԵՐՋՈՅԹՆԵՐ

Բայական անդամի լրացում վերջոյթները բաժանւում են երկու խմբի՝ խնդիր եւ պարագայ վերջոյթներ: Պարագայ վերջոյթը շատ աւելի յաճախադէպ է, եւ նրա ոճական արժէքն էլ մեծ է՝ պայմանաւորուած, այս դէպքում, հեղինակի անձնական վերաբերմունքի եւ պատումի յուզական տարրի գերակայութեամբ, որն աւելի չափական ու կշռոյթաւոր է դարձնում խօսքը: Պարագայ վերջոյթը հանդէս է գալիս գլխաւորապէս չափածոյ բարդ նախադասութիւններում, սակաւադէպ էլ՝ պարզ նախադասութեան մէջ: Առաջին դէպքում վերջոյթի անդամ պարագաները քերականօրէն կապւում են տարբեր, իսկ երկրորդ դէպքում՝ միեւնոյն լրացեալի հետ: Պարագայ վերջոյթները միատարր չեն եւ երեւան են գալիս տարբեր փոփոխակներով՝ կից տողավերջերում, առանձին տողերի միջարկումով, կրկնուող ստորոգեալի ուղեկցութեամբ եւ այլ ձեւերով:

Պարագայ վերջոյթն ունի հետեւեալ դրսեւորումները.

ա) Ժամանակի պարագայ վերջոյթ՝

Ի՞նչ անեմ: Աչքերս փակեմ,

Անրջեմ... ու բանամ *նորից*:

Ցուշերս հաւաքեմ մէկ-մէկ

Ու մտքով մանկանամ *նորից*:

Կորընստի սարսափը հերքեմ,

Ցոյսերից շիկանամ *նորից*...

Հաւատամ մարդուն, աշխարհին,

Մոլորուած չմնամ *նորից*:

Չգիտեմ՝ ո՞ւր եմ հասնելու,

Չգիտեմ՝ ե՞րբ եմ հասնելու...

Ճամփայ է, նստեմ այս քարին,

Ծունչ քաշեմ ու գնամ *նորից*[1] (ՀՍ, 2, 33):

Կ'ուզեմ հիմի փչէ զուռնէն-հարբած ըլիմ *միանչեւ էգուց*,

Ամէն մարդու ընկեր ըլիմ՝ - ու բաց ըլիմ *միանչեւ էգուց*... (ԵՉՊԲ, 286):

բ) Տեղի պարագայ վերջոյթ:

Տեղի պարագան վերջոյթ է կազմում թէ՛ միայնակ եւ թէ՛ այլ անդամի, գլխաւորապէս՝ ստորոգեալի հետ. ինչպէս՝

Մրսած մի տօթ *կայ օդում*,

Լուռ մի որոտ *կայ օդում*,

Ամպը շրթունք է արել,

Ամպրոպի հոտ *կայ օդում* (ՀՍՍԲ, 131):

Տեղի պարագան վերջոյթ է կազմում նաեւ իր որոշիչ լրացման հետ. ինչպէս՝

Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ *էն բանում*,

Հանգիստ չունեմ, դադար չունեմ *էն բանում*:

Զօրը մենակ՝ չեմ դիմանում *էն բանում*,

Գիշերն անտակ՝ չի լուսանում *էն բանում*,

Անցած օրերն եկել նորից *էն բանում*

Գէլ եմ դառել, ուտում եմ ինձ *էն բանում*:

---

1 Չնայած *նորից* բառը ընդհանրական մակբայ է դիտւում, բերուած օրինակում հիմնականում ժամանակի իմաստ է արտայայտում եւ ժամանակի պարագայ է:

© National Library of Armenia

Էլ չի մընում իմ սըրտիկը *էն բընում*,

Ցաւով լիքը, լոյսով լիքը *էն բընում* (ՑԹԸԵ, 46):

գ) Ջեւի պարագայ վերջոյթ՝

Ի՞նչ եղաւ... մենք մեզանից

Հեռացանք *կամաց-կամաց*,

Մէկմէկու յիշել անգամ

Թերացանք *կամաց-կամաց*:

Հոգսերի մարախն արտում

Հնձելու հասկ չթողեց...

Դեռ կարգին ջահել չեղած,

Ծերացանք *կամաց-կամաց* (ՀՍԴԾ, 161):

դ) Չափի պարագայ վերջոյթ՝

Քայլը հնչում է *ճոյն չափով*՝

Սոնա՜...

Կուրծքը շնչում է *ճոյն չափով*՝

Սիրո՛ւն... (ՊՍ, 4, 34):

Պարագաների համեմատութեամբ խնդիրները վերջոյթային կրկնութեամբ աւելի քիչ են հանդէս գալիս: Խնդիր վերջոյթի անդամների շեշտադրումը համեմատաբար թոյլ է: Այսպէս՝

Գետից ափով ջուր *տուեց ինձ*,

Քանի մարդուց *լուր տուեց ինձ*

Եւ ինձանից ոչի՜նչ, ոչի՜նչ

Չառաւ կածանը (ՀՍՔԵ, 56):

Այստեղ մատուցման խնդիր վերջոյթի որոշակի ընդգծումը պայմանաւորուած է ստորոգեալի կրկնութեամբ: Նմանապէս խնդիրը վերջոյթ է կազմում նաեւ իրեն նախադասուող ենթակայի հետ. օրինակ՝

Ինչքան որ հուր կայ իմ սրտում - *բոլորը քեզ*.

Ինչքան կրակ ու վառ խնդում - *բոլորը քեզ*.

Բոլո՛րը տամ ու նուիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնայ՝

Դո՛ւ չմրսես ձմռան ցրտում, - *բոլո՛րը քեզ* (ԵՉՊԲ, 285):

Այս նոյն սկզբունքով վերջոյթ խնդրին նախորդում են յարանուն ենթակաները՝ ստեղծելով բառախաղ. ինչպէս՝

Մընացել է *բերդը մեզ*,

Ցաղթանակի *երթը մեզ*.

Անց են կացել՝ ով կայինն,

Հիմի կը գայ *հերթը մեզ* (ՑԹԸԵ, 67):

Չնայած խնդիրների վերջոյթային կրկնութիւնը շատ չի խրախուսւում, այնուհանդերձ, երբեմն ամբողջ բանաստեղծութիւնը կառուցւում է խնդիր վերջոյթով, երբ խնդիրը կրկնւում է՝ ամէն անգամ նոր որոշիչ կամ յատկացուցիչ լրացումներով բնութագրուելու համար: Այսպէս՝

Ա՛խ, ես այս ծեր *աշխարհին*

Եւ այս ծծկեր *աշխարհին*,

Այս իմ ու ձեր *աշխարհին*

Ի՞նչ ասեմ, որ հասկանայ:

Այս վերամբարձ *աշխարհին*,

Այս փոխադարձ *աշխարհին*,

Անբանի բարձ *աշխարհին*

Ի՞նչ ասեմ, որ հասկանայ:

Այս յանցաւոր *աշխարհին*,

Վաղանցաւոր *աշխարհին*,

Խեղճ ու հզօր *աշխարհին*

Ի՞նչ ասեմ, որ հասկանայ... (ՀՍ, 2, 29):

Այստեղ յանգման խնդիր[2] *վերջոյթին զուգորդում է բոլոր տները եզրափակող*

---

2 Ոմանք ասացական բայերի տրականով խնդիրը համարում են *հաղորդման խնդիր*: Բերուած օրինակում *աշխարհին* բառաձեւը կարող ենք դիտել նաեւ որպէս հաղորդման խնդիր, իսկ նրա տուեալ կրկնութիւնը՝ *հաղորդման խնդիր վերջոյթ*:

տողի կրկնութիւնը, եւ արդիւնքում ապահովւում է բանաստեղծական չափի ու կշռոյթի ներդաշնակութիւնը:

Խօսքի յուզարտայայտչականութիւնն աւելի մեծ է ուղիղ խնդիր վերջոյթի դէպքում, մանաւանդ երբ այս վերջոյթով յատկորոշուող կշռոյթը լիցքաւորւում է կրկնուող խնդրին նախորդող համահունչ բառերի յանգաւորմամբ: Ներքին յանգի ու վերջոյթի նման զուգորդումը խօսքը դարձնում է ոչ միայն աւելի կշռոյթաւոր, այլեւ յուզական ու երաժշտական եւ խիստ ներգործուն: Այսպէս՝

Ես կը գամ, դուռդ կը բանաս,

Կընդունես *մոլորուած որդուդ*,

Աշխարհի բոլոր հողմերով,

Հովերով *օրօրուած որդուդ*,

Վաստակած ե՛ւ փուշ, ե՛ւ դափնի,

Ցամաքներ ու ծովեր անցած,

Եւ նորից երեխայ դարձած

Ու հացից *խռոված որդուդ* (ՀՍՍԲ, 34):

ե. Նախադասութեան յարակից միաւոր վերջոյթ

Զափածոյ խօսքում առանձին մասնաւոր դէպքերում վերջոյթ են կազմում նաեւ նախադասութեան յարակից միաւորները: Ընդ որում՝ սրանցից ամենայաճախադէպը կոչական վերջոյթի գործառումն է, որն արտայայտւում է տարբեր իրացումներով՝ պայմանաւորուած համատեքստային պայմաններով ու պահանջներով, եւ ամէն անգամ կրկնութեան ոճական արժէքը որոշակիօրէն տարբեր է լինում:

Կոչական վերջոյթի ամենատարածուած ձեւը տողավերջերում միջարկուած կրկնութիւնն է, երբ բազմաբաղադրիչ բարդ համադասական կապակցութեան իւրաքանչիւր բաղադրիչի վերջում կոչականը կրկնւում է՝ շեշտելով իր նշանակեալ անձի կամ առարկայի դէմքը: Այս դէմքն աւելի է ընդգծւում, երբ կոչականին նախորդում է ճարտասանական հարցումը, եւ վերջին կրկնորդը յուզական լիցք է կրում. օրինակ՝

Ձնից ճերմակ է

Քո թեւը, *կոո՛ւնկ*,

Սիրտդ ամպի պէս,

Ա՛խ, սեւ է, *կոո՛ւնկ*,

Դու զոյգ գնացիր,

Մենակ ես գալիս,

Ո՞ւր է, ախ, ո՞ւր է

Քո սէրը, *կոո՛ւնկ* (ՎԴԱՄ, 211):

Կոչական վերջոյթի անդամների ընդգծումը հաւասարաչափ է, երբ կրկնութեանը զուգորդում է ներքին յանգաւորումը: Այս դէպքում կշռոյթային համանուագայնութիւնն ապահովւում է ոչ միայն կրկնեալ ու կրկնորդ կոչականների, այլեւ դրանց նախորդող բառերի ու մնացեալ տողերի միջեւ. ինչպէս՝

Քոշաքարում ես վազել եմ

Եղնիկի հետ *երազ, Անո՛ւշ*,

Զըմրուխտ սարում երազել եմ

Զընաշխարհիկ *երազ, Անուշ* (ՑԹԸԵ, 58):

Ցաճախ կոչականը վերջոյթ է կազմում իր յատկացուցիչ եւ որոշիչ լրացումների հետ: Որոշիչը մի բանատողում ունենում է ձայնարկութեամբ արտայայտուած համարժէք եզր: Այսպէս՝

Էլ ոչ ոքի չեմ հաւատում, *Աստուա՛ծ իմ*,

Դու մնացիր իմ հէգ սրտում, *Աստուա՛ծ իմ*,

Վախենում եմ դու էլ, դու էլ ինձ դաւես,

Այրուեմ վշտիս անապատում, *Աստուա՛ծ իմ* (ՑԾ, 3, 227):

Կամ՝

Գնա՛ս բարով, *ա՛յ ուխտաւոր*,

Երանի քեզ, *հայ ուխտաւոր*... (Յովհ. Թումանեան):

© National Library of Armenia

Երբեմն էլ կոչական վերջոյթի անդամները ստանում են տարբեր բառակապակցութիւններով արտայայտուած որոշիչ լրացումներ, երբ խօսողը (գրողը) դիմուող առարկան բնութագրում է՝ նրա տարբեր յատկանիշները վկայակոչելով: Մաւալուն բնութագրման համար վերջոյթի անդամները հեռանում են իրարից, միջարկւում բնութագրիչ տողերով. օրինակ՝

Ի՞նչ ասեմ, ձեզ ի՞նչ ասեմ,

Իմ անցած-գնացած *սէրեր*,

Անշշուկ, անարձագանք -

Համրացած, խլացած *սէրեր*,

Եւ էլի սրտիս տաք-տաք

Արցունքով լուացուած *սէրեր*,

Ինձ այս մեծ տառապանքի

Մատեանում գրանցած *սէրեր* (ՀԱԴԾ, 159):

Այստեղ կրկնութեան ազդեցութեան դաշտը կրկնեալ եւ կրկնորդ կոչականների միջեւ բաժանուած է գրեթէ հաւասարաչափ: Այլ է վիճակը, երբ վերջոյթի առաջին անդամը՝ կրկնեալ կոչականը, իր լրացումներով գրաւում է ամբողջ տողը, իսկ կրկնորդը՝ կիսատողը. ինչպէս՝

Զարտասանուած տխուր խօսքեր,

Որ դողում էք անպատասխան,

Ես սիրում եմ, տխուր խօսքեր,

Ձեր թրթիռը կախարդական (ՎՏԲ, 68):

Յաճախ կոչականն իրեն ուղեկցող ձայնարկութեամբ ու լրացումներով վերջոյթ է կազմում ծաւալուն բանաստեղծութեան հատածի 2-րդ մասում՝ իր ներդաշնակ կրկնութեամբ ապահովելով բանաստեղծութեան չափը, կշռոյթն ու յանգաւորումը: Այսպիսի կրկնութիւնն ուժեղացնում է խօսքի քնարականութիւնն ու յուզականութիւնը: Այսպէս՝

Այնպէս պարզ ու խնդագին, *օ՜, խնդութիւն իմ սրտի,*

Պարզուեցիր իմ երկունքին, *օ՜, խնդութիւն իմ սրտի,*

Տուիր խնդուն ամէն ինչ եւ մոռացար ինքդդ քեզ,

Հիւսած կեանքդդ իմ կեանքին, *օ՜, խնդութիւն իմ սրտի,*

Ու ցաւերիս ցաւակից, դու խնդութիւն չտեսար,

Ինքդ խնդում երկնային, *օ՜, խնդութիւն իմ սրտի,*

Եղար ինձ քոյր մեղմանոյշ եւ քնքշագին սիրուհի,

Եղար ինձ մայր կաթոգին, *օ՜, խնդութիւն իմ սրտի.*

Հաւատարիմ սուրբ ուխտիս՝ եղար խանդոտ քրմուհի,

Վառ պահեցիր իմ հոգին, *օ՜, խնդութիւն իմ սրտի.*

Քե՛զ օրհնութիւն յաւիտեան, եւ երգ, եւ սէր, եւ աղօթք... (ՎՏ, 2, 104):

Վերջոյթ կոչականը երբեմն յաջորդ տողավերջում հանդէս է գալիս շարահիւսական այլ կիրառութեամբ՝ ստորոգելիի գործառոյթով, եւ արդիւնքում ստացւում է շարահիւսական համանունութիւն. ինչպէս՝

Ջրի ափին դաղձի *ծաղիկ,*

Իմ եղեամոտ բախտի *ծաղիկ,*

Եկ, ուշացած երգերիս մէջ

Քեզ դարձնեմ դրախտի *ծաղիկ* (ՀԱԴԾ, 5):

Նմանապէս բառը կարող է չափածոյ խօսքի սկզբի տողավերջերում կրկնուել՝ որպէս անուանական, անդէմ, միակազմ, բարդ համադասական կապակցութեան բաղադրիչների գերադաս անդամ, իսկ յաջորդ տողերի վերջում՝ որպէս կոչական: Այս դէպքում էլ, չնայած շարահիւսական գործառոյթի տարբերութեանը, տուեալ բառի տողավերջեայ բոլոր կրկնութիւնները կազմում են մէկ միասնական վերջոյթ,

որը կարելի է նաեւ անուանել շարահիւսական համանուն վերջոյթ. *օրինակ՝*

Բեռնամեքենայի թափքում՝ *ձիե՛ր,*

Վախից կծի՛կ դարձած, դողդողացո՛ղ *ձիեր,*

Ամէն շրջադարձի ու կեռմանի վրայ

Մե՛զ պէս (մարդու՛ նման) ճկուո՛ղ - թեքուո՛ղ,

Մե՛զ պէս (եւ աւելի՛) զգուշացո՛ղ *ձիեր...*

Ես ձեզ այդ վիճակից ինչպէ՞ս հանեմ, *ձիե՛ր,*

Լացս զսպեմ ու ձեր... ցա՛ւը տանեմ, *ձիե՛ր...* (ՊՍ, 2, 42):

Ակնյայտ է, որ կոչական վերջոյթի շղթան երկարելու դէպքում միտքը հակւում է միակազմ նախադասութեամբ դրսեւորուելուն, եւ արդիւնքում ստացւում է կոչական անդէմ, միակազմ նախադասութիւններից կազմուած մի բարդ կառուցուածք, որն, իբրեւ ոճական երեւոյթ, մօտենում է բացադարձութեանը՝ յատկորոշուած կոչականի վերջոյթային կրկնութեամբ: Այսպիսի բարդ համադասական կապակցութիւնը սովորաբար աչքի է ընկնում կոչականի նշանակեալ առարկան բազմակողմանիօրէն բնութագրելու առանձնայատկութեամբ: Այսպէս, օրինակ, Ցովհ. Շիրազը մօր ձեռքերի խորհուրդը մեկնելու համար, դիմելով ոճական այս հնարանքի կիրառմանը, հասել է գեղարուեստական մեծ ընդհանրացումների.

Անյոյս իմ տան յոյս *ձեռքեր,*

Մրոտ ձեռքեր՝ կոյս *ձեռքեր,*

Մեր օջախը վառ պահող

Մօրս ձեռքեր, լոյս *ձեռքեր:*

Մեր տան բախտը ջաղացքար՝

Դուք ջաղացիս ջուր, *ձեռքեր,*

Մեր խրճիթը սուրբ տաճար՝

Դուք խունկ ու մոմ, հուր *ձեռքեր:*

Ես կորած եմ առանց ձեզ,

Աւուր հացիս բոյր *ձեռքեր,*

Հայոց յոյսի թոնրի պէս

Միշտ ծխացող, լուռ *ձեռքեր:*

Օրօրեցէք ինձ նորից,

Իմ բարուրի բոյր *ձեռքեր,*

Հանէք վշտի սեւ ձորից,

Իմ գթութեան քոյր *ձեռքեր:*

Մեր տան վազան աղբիւրներ,

Մշտածարաւ, ծոմ *ձեռքեր,*

Մեր տան բախտի մութի մէջ

Աստծոյ վառած մոմ, *ձեռքեր:*

Մանկութիւնից մինչ այսօր

Մութ ճամփէքիս լոյս, *ձեռքեր,*

Ինձ միք թողնի վիրաւոր՝

Աստուածամօր կոյս *ձեռքեր:*

Թէկուզ ինձ էլ հող դնէք,

Դուք իմ Դաւթի հուր *ձեռքեր,*

Մասիսն անտուն չթողնէք,

Դուք իմ ազգի բիւր *ձեռքեր...* (ՑՇՑՄ, 71-72):

Այստեղ ձեռքեր *կոչականին լրացնող շատ որոշիչներ* (յոյս, կոյս, լոյս, հուր, բոյր *եւ այլն) տուեալ կապակցութիւններում պարզապէս մակդիրներ են, որ գեղարուեստօրէն բնութագրում են իրենց լրացեալի՝ մօր ձեռքերի իմաստն ու խորհուրդը: Բացի այդ, հեղինակը ստեղծել է նաեւ օքսիմորոնային նշանակութեամբ հակադրութիւնների արուեստաւոր խաղ* (անյոյս տան յոյս ձեռքեր, մրոտ ձեռքեր <-> լոյս ձեռքեր, վազան աղբոյրներ <-> մշտածարաւ, ծոմ ձեռքեր, բախտի մութ <-> վառած մոմ *եւ այլն):*

Նախադասութեան յարակից միաւորներից ձայնարկութիւնները վերջոյթ են կազմում աւելի սակաւադէպ՝ խնդրային յարաբերութեամբ կապուելով կրկնուող ստորոգեալի հետ. ինչպէս՝

© National Library of Armenia

Արածներիդ համար երբեք չես ասելու *ախ ու ափսոս,-*

Չարածներիդ համար պիտի ասես ափսո՜ս, *հազա՛ր ափսոս:*

Վահան Տէրեանն ասաց - աւա՜ղ, ինչու՞ դրի սրտիս կապանք,

Քանի՜ սէրեր, քանի՜ հուրեր զուր հանգցրի - *հազա՛ր ափսոս...* (ՎՏԲ, 401):

Թէիմաստ բառերից կազմերը եւս երբեմն վերջոյթ են կազմում տողավերջերում տարբեր կապի խնդիրների հետ գործածուելիս: Կապ վերջոյթը, որպէս կանոն, լինում է երկանդամ կամ եռանդամ. ինչպէս՝

«Ու գնում էին ամառուայ շոգին

Տէրը հոգսի *տակ,*

Էշը բեռի *տակ*

Կոքած երկուսով (ԱԻ, 2, 245):

գ. Նախադասութիւն վերջոյթ

Վերջոյթը չի սահմանափակւում միայն նախադասութեան անդամների ու յարակից միաւորների տողավերջեայ կրկնութեամբ, այլ երբեմն էլ ձեւաւորւում է բանաստեղծների հատածի աջ մասում նախադասութեան ներդաշնակ կրկնութեամբ: Եւ քանի որ կրկնւում է թէ՛ բարդ նախադասութեան վերջադաս բաղադրիչը եւ թէ՛ ինքնուրոյն նախադասութիւնը, ուստի տարբերակւում է նախադասութիւն վերջոյթի երկու տեսակ՝ բաղադրիչ նախադասութիւն վերջոյթ *եւ* ինքնուրոյն նախադասութիւն վերջոյթ: *Սրանք հանդէս են բերում տարբեր իւրայատկութիւններ՝ պայմանաւորուած չափածոյ խօսքի կառուցուածքային ու ժանրային առանձնայատկութիւններով, կրկնւող շարահիւսական միաւորի արտայայտութեամբ եւ այլ հանգամանքներով:*

1. ԲԱՂԱԴՐԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ ՎԵՐՋՈՅԹ

Բաղադրիչ նախադասութիւն վերջոյթը, որն անհամեմատ աւելի շատ է հանդիպում, արտայայտւում է բանաստեղծական տողերի հատածի կամ հիմնական հատածի աջ կողմում: Հատածը տուեալ դէպքում սահմանն է վերջոյթի անդամների եւ նոյն տողերի ձախակողմեայ հատուածների: Ակնյայտ է, որ վերջոյթի անդամները՝ կրկնուող բաղադրիչ նախադասութիւնները, կազմութեամբ միատարր չեն եւ նախադաս բաղադրիչ նախադասութիւնների հետ կապւում են համադասական ու ստորադասական յարաբերութիւններով: Առաւել յաճախադէպ է պարզ բաղադրիչ նախադասութիւն վերջոյթը, երբ հարեւան տողերի երկրորդ մասում պարզ նախադասութիւնը կրկնւում է՝ ամէն անդամ շարահիւսական նոյն կամ մի նոր յարաբերութեամբ կապուելով նախադաս բաղադրիչ նախադասութեան հետ: Նման կրկնութիւնն աւելի շատ երեւան է գալիս ռուբայիի ժանրում: Եթէ սովորական քառատող տան մէջ աւելի յաճախ յանգաւորւում են 1-ին, 2-րդ եւ 4-րդ տողերի վերջնաբառերը, ապա այս դէպքում տողավերջեայ արտասանութեան համարժէքութիւնն աւելի մեծ ծաւալով է արտայայտւում՝ յանձին քառեակի նշուած երեք տողերի՝ միեւնոյն բաղադրիչ նախադասութեամբ վերջանալու: Այսինքն՝ ռուբայու կրկնուող մասը՝ ռեդիֆը, արտայայտւում է նախադասութեամբ: Այստեղ էական նշանակութիւն է ստանում վերջոյթի անդամների եւ նոյն տողերի առաջին մասում շարակարգուած բաղադրիչ նախադասութիւնների շարահիւսական յարաբերութիւնը: Դրանց միջեւ մեծ մասամբ գործաւորւում են հակասման ու միաւորական յարաբերութիւնները. ինչպէս՝

Ապրում ես, շնչում ես, դու դեռ կաս - *բայց ամէ՛ն վայրկեան դու ա՛յլ ես.*

Անցեալ է դառնում քո ներկան - *ու ամէ՛ն վայրկեան դու ա՛յլ ես.*

Բայց ներկան քո - հո՛ւնտ է գալիքի՝ մեռնելով - նա սնում է գալիքը,

Եւ այսպէս - տեւում ես դու երկար, - *ու ամէ՛ն վայրկեան դու ա՛յլ ես* (ԵՁՊԲ, 351):

Այստեղ վերջոյթ նախադասութիւններն իրենց զուգընկեր նախադասութիւնների հետ կապակցուած են բայց *եւ* ու *համադասական շաղկապներով: Վերջոյթային կրկնութեամբ յատկորոշուող ռուբային լինում է նաեւ շարայարական կառուցուածքի, եւ այս դէպքում բանատողերի հատոյթաւորումը նախադաս բաղադրիչ նախադասութիւնների եւ վերջոյթի անդամների միջեւ աւելի ընդգծուած է. օրինակ՝*

Հետեւա՛նք ես դու, իմաստո՛ւն,- *այս մէկը դու լա՛ւ իմացիր.*

Բայց դո՛ւ էլ ես, դո՛ւ էլ ես ազդում,- *այս մէկը դու լա՛ւ իմացիր.*

Դու ուզում ես, որ ազա՞տ լինես.- ուրեմն հասկացի՛ր ճանապարհդ

Եւ փոխի՛ր, որ հաստատ գաս տուն,- *այս մէկը դու լա՛ւ իմացիր* (ԵՁՊԲ, 354):

Բաղադրիչ նախադասութիւն վերջոյթն արտայայտւում է նաեւ գազելի ժանրում, միայն թէ այստեղ վերջոյթ են կազմում առաջին տան երկու տողերը յաջորդ տների երկրորդ տողերի հետ միասին: Այս բոլոր տողերը հատոյթաւորւում են երկու մասի, եւ հատոյթի անդամները կապւում են միաւորական, մակաբերական, հակասման ու այլ յարաբերութիւններով, կապակցւում են շաղկապով ու շարայարութեամբ: Բերենք կապակցման իւրաքանչիւր տեսակից մէկ օրինակ՝

Դու մօտեցար որպէս քոյր - *ու հեռանում ես ահա.*

Աղօթք դարձած, խնկաբոյր - *դու հեռանում ես ահա:*

Ինչո՞ւ եկար, եւ ինչո՞ւ անրջացար ու չկաս.

Հրաժեշտի մի համբոյր - *ու հեռանում ես ահա:*

Գուցէ սո՛ւտ է սէրը այս - հրաժեշտի մի երազ-

Քո՛ւյր, հո՛ղ դարձած հեռաւոր, *դու հեռանում ես ահա...* (ԵՁՊԲ, 259-260):

Ես այլ չունեմ քո հող-թագին, *եկ, Շամիրամ, այս գիշեր,*

Ա՛խ, սիրել եմ ուզում կրկին, *եկ, Շամիրամ, այս գիշեր,*

Ես Արան եմ, Գեղեցիկի հազարերորդ թոռն եմ թուխ,

Թէ դեռ վարդ կայ քո շրթունքին, *եկ, անթառամ, այս գիշեր...* (ՑԾ, 3, 55):

Նմանապէս վերջոյթ է կազմում նաեւ ստորադաս նախադասութիւնը, երբ բանատողերի երկրորդ մասում կրկնուող կախեալ նախադասութիւնը միեւնոյն ստորադասական յարաբերութեամբ կապւում է տողակզբի բաղադրիչ նախադասութիւնների հետ: Տողահատոյթների երկու մասերի կապակցումը կատարւում է ստորադասական շաղկապներով: Շարահիւսական նման բազմաբարդ կառուցուածքում վերջոյթի անդամները հիմնականում լինում են նախորդ հաղորդումից բխող հետեւանքի արձանագրում: Նման կրկնութիւնը եւս խիստ բնորոշ է ռուբայու ժանրին, որը տուեալ դէպքում փիլիսոփայական խորհրդածութիւն է արտայայտում կյանքի յաւերժ նորոգման հարցի շուրջ: Կրկին մէջբերենք Զարենցից.

Դու մի օր աչքերդ կը փակես, *որ ուրիշը քո տեղ գոյանայ.*

Կը գնաս, կ'անցնես աշխարքից, *որ ուրիշը քո տեղ գոյանայ:*

- Այն դո՛ւ ես, իմաստու՛ն, այն դո՛ւ,- բայց արդէն դարձած մի ուրիշ.

Հաստատեց, ժխտելով նա քեզ, *որ ուրիշը քո տեղ գոյանայ* (ԵՁՊԲ, 353):

© National Library of Armenia

Ամբողջ ասուածը վերաբերում է բարդ նախադասութեան յետադաս պարզ բաղադրիչի կրկնութեամբ կազմուած վերջոյթին: Նոյն սկզբունքով վերջոյթ է կազմում նաեւ բարդ ստորադասական նախադասութիւնը, եւ այս դէպքում, բնականաբար, վերջոյթի ընդգրկման սահմանները շատ աւելի լայն են լինում: Վերջոյթի անդամների եւ դրանց նախադաս բաղադրիչ նախադասութիւնների միջեւ առկայ է համադասական յարաբերութիւնն իր մասնաւոր դրսեւորումներով (միաւորական, հանդիպադրական եւ այլն): Բարդ ստորադասական նախադասութիւն վերջոյթն էլ հիմնականում երեւան է գալիս ռուբայու ժանրում. ինչպէս՝

Ախ, նայե՛ք, այդ մարդը, այդ յիմարը.- *Նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.*

Հաւատում է նա, որ սա քար է. *Նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.*

Դու ծաղրի՛ր նրան, իմաստու՛ն. դու տեսնում ես աճումն ու ընթացքը

Եւ գիտես, որ ընթացք է աշխարհը,- *Նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է* (ԵԶՊԲ, 353):

Բաղադրիչ նախադասութիւն վերջոյթի մէկ այլ տեսակ կարելի է համարել բանաստեղծութեան բոլոր տների՝ միեւնոյն նախադասութեամբ վերջանալը, երբ տուեալ բաղադրիչ նախադասութիւնը որոշակի ներդաշնակութեամբ կրկնւում է հաւասար հեռաւորութեան վրայ: Նման վերջոյթը չափածոյ խօսքում երեւան է գալիս տարբեր փոփոխակներով. կա՛մ բոլոր բանատներն են վերջանում միեւնոյն նախադասութեամբ եւ կա՛մ այդ տների մի մասը: Այսպէս, օրինակ, Վ. Տէրեանի եռատուն «Հրաժեշտի խօսքերից» բանաստեղծութեան 2-րդ եւ 3-րդ տները վերջանում են միեւնոյն նախադասութեամբ.

Իմ ճամփան անվախճան մի գիշեր,

Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտայ.-

Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի յիշիր,

Ինձ այդպէս, քրոջ պէս մի՛ գթայ...

Յուսաբեկ մութ ու մէգ թող լինի,

Իմ վերեւ թող արեւ չընկնդայ.

Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,

Ինձ այդպէս, քրոջ պէս մի՛ գթայ... (ՎՏԲ, 65):

Այստեղ վերջոյթ կազմող ընդգծուած նախադասութիւնները մի տեսակ ամփոփում են նախորդ տողերի բովանդակութիւնը, ծառայում են մարդկային տրամադրութիւնների ներդաշնակութեան, հոգեպարար հանգստութեան դրսեւորմանը:

Երբեմն էլ եզրափակիչ վերջոյթ են կազմում միեւնոյն բանաստեղծութեան բոլոր տների վերջին տողերը: Սա բաղադրիչ նախադասութիւն վերջոյթի դրսեւորման տարածուած եղանակ է: Այսպէս՝ Տերեանի «Ինքնօրօրում» բանաստեղծութեան բոլոր երեք տները վերջանում են «Սիրտ իմ, հանդարտի՛ր...» տող-նախադասութեամբ (տե՛ս ՎՏԲ, 111):

Բանաստեղծութեան, այսպէս ասած, տնավերջեայ վերջոյթն ունի դրսեւորման նաեւ այլ ձեւեր: Զարենցը, օրինակ, իր «Մեռած պոէտին» բանաստեղծութեան անհաւասար տողերով կազմուած առաջին երկու տները վերջացնում է «Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր» նախադասութեամբ, իսկ վերջում՝ երրորդ տնից յետոյ, առանձին գործածում է այն ինքնուրոյն նախադասութեան արժէքով՝ սահմանափակելով վերջոյթի շղթան:

Տնավերջեայ վերջոյթ կազմող նախադասութիւնները կազմութեամբ լինում են ոչ միայն պարզ, ինչպիսին որ բերուած օրինակներն են, այլ նաեւ բարդ՝ լիակատար նոյնականութեամբ կամ բառային մասնակի տարբերութեամբ: Այսպէս՝ Յովհ. Շիրազն իր «Մի կեանք արժէ մի համբոյրը

աղջկայ» բանաստեղծութեան բոլոր չորս տները վերջացնում է միեւնոյն բարդ համադասական նախադասութեամբ՝ ամէն անգամ փոխելով միայն ժամանակի պարագայի արտայայտութիւնը: Տեղի խնայողութեան համար մէջբերում ենք միայն քառատողերի վերջոյթ կազմող տողերը.

...Կին կը գտնես, բայց մայր *երբեք* չես գտնի...

...Կին կը գտնես, բայց մայր *նորից* չես գտնի...

...Կին կը գտնես, բայց մայր, *աւա՜ղ*, չես գտնի...

...Կին կը գտնես, բայց մայր *յաւերժ* չես գտնի...:

Այս վերջոյթում ժամանակի պարագաների փոփոխութեամբ (ներառեալ ձայնարկութեան փոխակերպմամբ) ընդհանուր կրկնուող բովանդակութիւնը հարստացել է իմաստային նոր նրբերանգներով, եւ յաղթահարուել է պատումի միալարութիւնը: Բայց ահա. «Յուշարձան մայրիկիս» ժողովածոյի երկրորդ հրատարակութեան մէջ նոյն բանաստեղծութեան բոլոր չորս տները վերջանում են նոյն տող-նախադասութեամբ՝ Կին կը գտնես, բայց մայր երբէք չես գտնի *(հմմտ. ՅՇՅՄ, 1-ին հրատ., էջ 62, 2-րդ հրատ., էջ 99): Պատումի ոճական միալարութեան յաղթահարման եւ մարդկային տրամադրութիւնների ներդաշնակ փոփոխութեան ապահովման առումով մենք նախընտրելի ենք համարում սոյն բանաստեղծութեան առաջին տարբերակը:*

2. ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ ՎԵՐՋՈՅԹ

Զափածոյ խօսքում սակաւադէպ վերջոյթ է կազմում նաեւ ինքնուրոյն նախադասութիւնը, երբ բանաստեղծութեան բոլոր տողերը բաժանւում են երկու հաւասար մասի. տողերի հատածի ձախ կողմում շարակարգւում են տարբեր պարզ նախադասութիւններ, որոնց շարայարութեամբ առանձին-առանձին հանդիպադրւում է միեւնոյն ինքնուրոյն պարզ նախադասութիւնը՝ կազմելով աստիճանական շարահիւսական կրկնութեամբ վերջոյթ: Մեծ վարպետութիւն պահանջող արտայայտչութեան այս ձեւի կիրառմանը դիմում է հիմնականում Հ. Սահեանը: Նրա «Որդիս կը գայ» բանաստեղծութիւնը կառուցուած է այս սկզբունքով:

Ցաղթութիւն եկաւ: -*Որդիս կը գայ:*

Զօրքը տուն եկաւ: - *Որդիս կը գայ:*

Հօտից գառ բերեց: -*Որդիս կը գայ:*

Գառը գառ բերեց: - *Որդիս կը գայ:*

Կռունկը չուեց: - *Որդիս կը գայ:*

Պատը ճաք տուեց: - *Որդիս կգայ:*

Մարգը չորացաւ: -*Որդիս կը գայ:*

Մէջքը կորացաւ: -*Որդիս կը գայ:*

Ցաւը խորացաւ: -*Որդիս կը գայ:*

Մտաւ անկողին: -*Որդիս կը գայ:*

Փառք տանք յաղթողին, *որդիս կը գայ:*

Դժուար է շնչում: -*Որդիս կը գայ:*

Հոգին էր փչում: -*Որդիս կը գայ:*

Բոլորեց տարին, աչքս վկայ,

Կարդացինք քարին - «*Որդիս կը գայ*» (ՀՍ, 2, 344-345):

Ժամանակի յարահոս ընթացքի մէջ փոխւում է շատ բան, եւ ամէն մի փոփոխութեան հանդէպ նոյնութեամբ կրկնւում է որդեկորոյս մօր հաստատակամ հաւատը որդու վերադարձի վերաբերեալ: Նախադասութիւն վերջոյթի արուեստաւոր կիրառմամբ բանաստեղծը ներկայացնում է մօր յոյսի ու հաւատի անսասանութիւնը, դրանց դրսեւորումն իրենց շարունակական ընթացքի մէջ:

Ամփոփենք: Վերջոյթը չափածոյ խօսքի կառուցուածքային անդամահատման ու շարահիւսական նիւթի համաչափ բաշխ-

© National Library of Armenia

ման միջոց է ծառայում եւ, որպէս արուեստաւոր խօսքի կառուցման ձեւ, արտայայտւում է տարաբնոյթ իրացումներով՝ ապահովելով անհրաժեշտ յուզարտայայտչականութիւնն ու զգացական ներգործութիւնը:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԻ - **Աւ. Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, հ.հ. 1-4, Երեւան, 1973-1975:

ԳԱԾ - **Գ. Աշոտ**, *Ծովաստղիկս*, Երեւան, 1982:

ԳԱԳՍ - **Գ. Աշոտ**, *Գուսանի սէրը*, Երեւան, 1958:

ԳՍԲՊ - **Գ. Սարեան**, *Բանաստեղծութիւններ եւ պոէմներ*, Երեւան, 1982:

ԵԶ - **Ե. Չարենց**, *Երկերի ժողովածոյ*, հտ. 1, Երեւան, 1962:

ԵԶՊԲ - **Ե. Չարենց**, *Պոէմներ եւ բանաստեղծութիւններ*, Երեւան, 1984:

ԴԴՎ - **Դ. Դեմիրճեան**, *Վարդանանք*, Երեւան, 1954:

ՅԹԸԵ - **Յովհ. Թումանեան**, *Ընտիր երկեր*, Երեւան, 1978:

ՅՇ - **Յովհ. Շիրազ**, *Քնար Հայաստանի*, հտ. 3, Երեւան, 1974:

ՅՇՅՄ - **Յովհ. Շիրազ**, *Յուշարձան մայրիկիս*, Երեւան, 1979:

ՀՍ - **Հ. Սահեան**, *Երկերի ժողովածոյ*, հտ. 2, Երեւան, 1984:

ՀՍԴԾ - **Հ. Սահեան**, *Դաղձի ծաղիկ*, Երեւան, 1986:

ՀՍՍԲ - **Հ. Սահեան**, *Սեզա՛մ, բացուիր*, Երեւան, 1972:

ՀՍՔԵ - **Հ. Սահեան**, *Քարափների երգը*, Երեւան, 1968:

ՇՏ - **Շիրին**, *Տաղեր*, Երեւան, 1956:

ՊՍ - **Պ. Սեւակ**, *Երկերի ժողովածոյ*, հ. հտ. 1-4, Երեւան, 1972-1974:

ՎԴԱՄ - **Վ. Դաւթեան**, *Անկէզ մորենի*, Երեւան, 1972:

ՎՏ - **Վ. Տէրեան**, *Երկերի ժողովածոյ*, հտ. 2, Երեւան, 1961:

ՎՏԲ - **Վ. Տէրեան**, *Բանաստեղծութիւններ*, Երեւան, 1985:

ՅԱԿՈԲ ՉԱՔԱՐԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱՒԱՌԻՆ ԱՐՑԱԽՈՒ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Արտակ Մաղալեան

Արցախի XVIII դարի երկրորդ կէսի եւ XIX դարի սկզբների պատմութիւնն արտացոլող սկզբնաղբիւրների շարքում կարեւոր տեղ է գրաւում Երուսաղէմի միաբան Յակոբ սարկաւագ Չաքարեան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» պատմագրական երկը՝ գրուած «յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ»[1], որի ձեռագիրը պահպանւում է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում (թիւ 2734)[2]:

Աշխատութեան հեղինակ Յակոբ Չաքարեանի մասին քիչ բան է յայտնի: Անյայտ է նաեւ նրա ծննդեան թուականը, սակայն հեղինակը նշում է, որ իր նկարագրած դէպքերից «յոյժ սակաւուցն ի յետին ժամանակի ականատես լեալ»[3]: Այստեղից կարելի է ենթադրել, որ նա ծնուել է XIX դարի 10-ական թուականներին: Մկրտիչ եպս. Աղաւնունին իր «Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի» գրքում նրա մասին հաղորդում է կենսագրական ժլատ տեղեկութիւններ. «Յակոբ սրկ. Պօղոսեան Չաքարեանց, Շուշեցի.- միաբան. 1860ին Ս. Յակոբի վանքին, կ"ընդօրինակէ «Անտառ այլաբանութեան» գիրքը»[4]: Յիշեալ ձեռագիրը ներկայումս պահւում է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատանը 2680 թուահամարի տակ[5]: Ձեռագիրն ընդօրինակողի, ստացողի, գրչութեան տեղի եւ ժամանակի մասին հաղորդւում է հետեւեալը. «Ընդօրինակեցաւ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի նուաստ միաբան Շուշեցի Յակոբ Պօղոսեան Չաքարեանց յետին սարկաւագի: Յամի Տեառն 1860, դեկ. 21, ի Սբ. Երուսաղէմ, ի կաթուղիկոսութեան Բ. Մատթէոս սրբազանին եւ ի պատրիարգութեան Երուսաղէմի Տ. Յոհաննու: Ի վայելս Բագու[ե]ցի Խաչատուրեան Նաճառեանց Փիլիպպոս Վարդապետ շնորհափայլ հօր իմոյ եւ աշխատաւոր միաբանի եւ Աստուածածին Կուսի լուսափայլ դամբարանին հաւատարիմ ծառայի եւ գլխովին տեսչի՝ մատուցանեմ եռանդագին սիրով, ակնկալեալ օժանդակութեան աղօթից եւ յիշմանց նորին սուրբ հայրութեանն՝ այժմ եւ յաւէտ...

Քանզի ի սկզբան ձեռնարկութեանս մերոյ ի սոյն, յերկրորդում աւուր, որ էր 22 դեկտեմբեր ամսոյ 1861 [1860] ամի՝ Սրբոյ Աթոռոյս մերոյ այցելու եւ պատրիարգ Զմիւռնեցի Յոհաննէս արքեպիսկոպոս սրբազան հոգեւոր հայրն մեր զմահ ճաշակեալ եղաւ ի չիրիմս սրբոց...

Աւարտ մատենիս եղեւ ի 25 յուլիս ամսոյս 1861 ամի, ի Սբ. Երուսաղէմ, յԱթոռ Սբ. Յակոբեանց»[6]:

---

1 Յակոբ սրկ. Չաքարեան, *Պատմութիւն գաւառին Արցախու*,- ՄՄ, ձեռ. 2734, թ. 1ա

2 Մատենադարանի ձեռագրացուցակում սոյն ձեռագիրը ներկայացուած է այսպէս. «1853 թ.: Երուսաղէմ: Գրիչ՝ հեղինակը: Թերթ՝ 32: Թուղթ: 29,8 x 19,8: Միասիւն: Ծղագիր: Տող՝ 33: Կազմ՝ ստուարաթուղթ: Ցիշատակարան գրչի՝ 1ա, 14ա, հետագայի՝ 14ա»: (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա, Երեւան, 1965, էջ 864): Աւելացնենք, որ չգրուած են ձեռագրի 14բ եւ 22ա-բ թերթերը:

3 Տե՛ս ՄՄ, ձեռ. 2734, թ. 23ա

4 **Մ. եպս. Աղաւնունի**, *Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1929, էջ 326

5 Տե՛ս **Ն. արքեպս. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. 8, Երուսաղէմ, 1977, էջ 298-299

6 Նոյն տեղում, էջ 299

© National Library of Armenia